


# ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՄԱՅԻՍ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻ ԺԵ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

1. Խնթագրական . —	ԵՁ
Բնագիտութիւն եւ Ս. Գիրք .	128
2. Հոշակաւոր Դասի վր Վերաբնակութիւնը .	135
3. Քարոզ . —	
«Տէր է Շաքարու Որդի Մարդոյ» .	140
4. Մատենախօսական . —	
Իշխան Լուսինեանի Ֆրանսեայ Բառգիրք .	149
Պարոն Մուրաշեանի Արարատ եւ Մասիս	151
5. Թղթակցութիւն . —	
Նանակ Չմիռնիսային .	155
Նանակ Ռուսաստանէն .	156
6. Քերթուած .	
Հոգի եւ Մարմին . Երկու Ոսոխներ (շար .)	157

Հանդիսիս բաժանորդագիւնն է ամեն  
 տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,  
 վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ թղթատարաւ .  
 Տանկաստանի բաղաւայ մէջ ձեռքէ կը ծախուի  
 հասը՝ Երկու (2) Դանեկանի :

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան  
 վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել  
 առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

**ARMENIAN RECTORY,**  
**Upper Brook Street,**  
**MANCHESTER.**

# ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԻ

## ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԹԻԻ 15

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՑԻՍ 1901

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ Ս.ԳԻՐԲ

**Ա**սաց անզգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած : » Երևը հազար տարւով յառաջ այս էր գանգատն Դաւիթ մարգարէի ընդդէմ իւր ժամանակակից անհաւատ եւ նիւթամուլ մարդոց , որք իւրեանց ստորին կիրքերը աներկիւզ յագեցնելու ճգամք , եւ խղճի խայթումն թմբացնելու յուսով՝ կ'ուրանային Աստուծոյ գոյութիւնը : Սիրելի՛ ընթերցող , կըտեսնես որ անհաւատութեան դարն մեր օրերը չըսկսաւ , այլ արդէն ի հնունս գոյութիւն ունէր « անզգաւորքներ » , ինչպէս Դաւիթ մարգարէն կըկոչէ այս ախտ , եւ անտեղի է մեր հակառակորդաց ոմանց առարկութիւն թէ անցած է այլ եւս հաւատքի եւ բարեպաշտութեան դարն , իբր թէ հինը բոլորովին հաւատքի դար եղած լինէր , եւ ներկայն՝ բոլորովին անհաւատութեան յարած լինէր : Նոյն առարկութիւնը կ'անէին « անզգամք » ի հնունս , մինչ Իսրայէլի արքայական աթոռոյ վերայ թաղմած էր Սաղմոսերգու Մարգարէն , ինչ որ կըլսենք այսօր նոցա յաջորդներէն : Տարբերութիւնը միայն ժամանակի եւ պարագայից տարբերութիւն է . յայնժամ գաղտնի՝ եւ զեղծ ու անխիղճ կենցաղավարութեամբ կըբարոյէին զայս , այսօր հրապարակաւ կըխօսին ու կըզրկեն՝ վստահ լինելով որ այժմեան ժամանակի ներող ոգին եւ նորաձեւութիւնը պիտի պաշտպանէ զնոսա :

Ի հնումն գուցէ մեր ընդգիմամարտից զէնքեր եւս տարբեր էին, աւելի կոշտ ու կոպիտ, բայց նուազ ազգու եւ զօրաւոր քան թէ հաւատոյ եւ աստուածպաշտութեան այժմեան հակառակորդաց զէնքեր: Այսօր իւրեանց քարոզներ աւելի հրապուրիչ առնելու համար ամեն ճիգ կը թափեն ցոյց տալ թէ բնական գիտութեանց հետազոտութիւնք Ս. Գրոց այլ եւ այլ հատուածոց չեն համաձայնիր, թէ մինչ Ս. Գիրք տիեզերաց ստեղծագործութիւնը իբրեւ վեց աւուր մէջ լրացած կը նկատէ. բնագիտութիւնը հազարաւոր եւ բիւրաւոր ամաց եւ դարուց անսահման ժամանակի զարգացում եւ պատմութիւն կը ներկայացնէ. թէ մինչ Ս. Գիրք զմարդն մասնաւորապէս երկրի հողէն «ի պատկեր Աստուծոյ» ստեղծած կը համարի, Գարուին եւ նորա հետեւողք մարդոյս ներկայ մարմնաւոր եւ մտային կազմուածք իբրեւ դարաւոր զարգացման արդիւնք կը նկատէ. իբր թէ իսկզբան ամենաստորին արարածներէն մին էր, եւ այլ եւ այլ պարագայից բերմամբ հաւանական կը թուինոցա որ հետզհետէ զարգացած բարձրացած է իւր ներկայ գերիշխան եւ կատարելութեան վիճակին տիրացած է:

Այս բոլոր են թաղրութիւններ եւ հաւանականութիւններ Ս. Գրոց մէջ չգտնելնուն համար կը մերժեն զայն: Ս. Գրոց մէջ յայտնուած Աստուածն իւրեանց հետազոտութեանց եւ ենթադրութեանց մէջ տեղ չունի, աստուածային յայտնութիւնն ոչ այլ ինչ է բայց եթէ հաւաքումն առասպելաց: Այս կարգի անձերէն ոմանք՝ աստուածպաշտութիւնն իբրեւ մի ծանր լուծ նկատելով եւ Ս. Գրոց բարոյական օրէնքներէն ազատուելու գիտմամբ՝ այս հրապուրիչ այլ մոլորեցուցիչ հնարքը գտած են եւ գործ կը դնեն. անզազար անմեղների ականջին կը յեղչեղեն թէ բնական գիտութիւնք հակառակ են Ս. Գրոց եւ եկեղեցոյ հաւատալեաց. թէ Ս. Գիրք կը քարոզէ այնպիսի բաներ որ բնագիտութեամբ անապացուցանելի են: Իսկ այլք բազումք — անհաւատութեան հետեւողաց մեծամասնութիւնն — իսկապէս կը խաբուին իւրեանց ուսուցիչներէն, եւ անկեղծօրէն կը հուստան թէ Ս. Գիրք հակառակ է բնագիտական ճշմարտութեանց, եւ կը կարծեն թէ որովհետեւ իւրեանց ուզածն ու փնտռածն Ս. Գրոց մէջ չեն գտներ, ուրեմն վերջնոյս ամբողջ հեղինակութիւնը եւ նորա բոլոր յայտնութիւններ մերժելու է իբրեւ կեղծ եւ առասպելապատում:

Սակայն զարմանալին այն է որ այս լուսաւորեալ կարծուած դարու լուսաւորեալ եւ ուսումնական զաւակունք գիտական հետազոտութեանց առաջին եւ հիմնական օրինաց գէմ չարաչար կը մեղանչեն առանց զգալու կամ տեսնելու իւրեանց սխալն . այնքան խոշոր սխալ որ հասարակ առօրեայ կենաց մէջ նոյն իսկ ամենէն տգէտ եւ անուս գիւղացին չպիտի գործէր : Ո՞ր խուժիկ հողագործի մտքէն կանցնի հացագործի հետ վիճել եւ նորա գործունէութիւնն արհամարհել՝ անկէ հաց չգնել , որովհետեւ նա (հացագործը) կօշիկ չի շիներ : Բայց երեւի ինչ որ խուժիկ հողագործին ներելի չէ՝ ներկայ դարուս «լուսաւորեալ» մարդոց ներելի է : Ս. Գրոց ամբողջ հեղինակութիւնն , նորա գերբնական յայտնութիւնն եւ փրկաւէտ նպասակ կ'ուրանան եւ կը մերժեն , որովհետեւ նորա մէջ բնագիտական օրէնքներ չեն գտնուիր , ինչպէս իրենք գիտեն կամ կը կարծեն թէ գիտեն : Մէկ խօսքով՝ հացագործէն կօշիկ կուզեն , եւ նորա մօտ կօշիկ չգտնելնուս համար՝ կը զայրանան եւ զայն կ'արհամարհեն ասելով՝ Դու ոչ կօշկակար ես ոչ հացագործ . մենք ալ քեզմէ ոչ հաց կ'առնենք ոչ կօշիկ : Սոյնպէս կը մտնան Ս. Գրոց եւ աստուածագաշտութեան հակառակորդք որ Աստուածաշունչի նպատակն է՝ Մինդոց գրքի առաջին բաւուէն մինչեւ Յայտնութեան վերջին բառն՝ ուսուցանել մեզ այս մէկ եւ հիմնական օրէնք . «Իսկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր :» Այսինքն , մէկ գերագոյն էակ կայ , որ ամենայն ինչ երեւելի եւ աներեւոյթ՝ ստեղծած է , եւ այն հրաշալի ներգաշնակութեամբ զոր կը ստանենք ամեն օր՝ կը կառավարէ : Ս. Գրքն ամենեւին ստանձնած չէ մանրամասնօրէն , կամ աւելի լաւ , բնագիտօրէն , բացատրել այդ ստեղծագործութեան պարագայներ : Ս. Գրոց այլ եւ այլ մասանց մարդկային հեղինակներ այն լեզուաւ եւ այն ոճով գրեցին , որով իւրեանց փամանակակից մարդիկ խօսելու եւ խորհելու սովոր էին : Այս հիմնական ճշմարտութիւնն յայտնելու միջոցին իւրեանց սանձանէն դուրս էր՝ բնագիտական այնպիսի խնդրոց միջամուխ լինել , որ միայն յընցիժացս դարուց մարդկային մտաց հետազոտութեան առարկայ պիտի լինէր :

Երբեմն կրօնի վարդապետներ սխալած են՝ երես դարձնելով բնական գիտութեանց այս կամ այն ճիւղին գէմ , կամ նորա ուղիղ կամ սխալ հետազոտութեանց եւ արդեանց գէմ , կարծելով թէ այդ գիտութիւնք հակառակ են բանից Սուրբ

Գրոց, որովհետեւ մանրամասնութեանց մէջ բնական գիտութիւնք այլ իմն պատմել կը թուին քան զոր ի Ս. Գրքս կ'ընթեռնումք: Այս կերպ խորթութիւն նոյնքան անվայել է ուսումնասէր մարդոյն, նոյնքան արդիւնք է նախապաշարեալ մտաց եւ հետեւարար նոյնքան դատապարտելի է, որքան Դարուինականաց ոմանց իմաստակ հակառակութիւնն ընդդէմ կրօնից եւ հաւատոյ: Եթէ բնական գիտութիւնք կարենան անփառելի ապացոյցներով հաստատել որ եւ է մի բնագիտական ճշմարտութիւն, այդ ճշմարտութիւնը իւրաքանչիւր անկեղծ հաւատացեալ քրիստոնէի համար նոյնքան սրբազան եւ ընդունելի է որքան Ս. Գրոց յայտնութիւնն իսկ: Քաւ' լիցի որ Աստուծոյ զրական եւ գրաւոր յայտնութեանց հաւատացող քրիստոնէական ուրանայ մերժէ բնութեան տեսանելի եւ շօշափելի ու զգալի յայտնութիւնն: Մարդկային բնութեան թերութիւն եւ զառաժում կարեն զգիլն եղծանել, բայց տիեզերաց անեղծանելի օրէնքներ ո՞վ կարէ խանգարել կամ փոփոխել: Ապա ուրեմն եթէ բնական գիտութիւնք կարեն անփառելի փաստիւք ապացուցանել թէ տիեզերք այս ինչ կամ այն ինչ կերպով ի գոյութիւն եկած է յընթացս միլիօնաւոր ամաց եւ դարուց, եթէ բնական գիտութիւնք կարեն անհերքելի ապացոյցներով հաստատել թէ մարդ ի սկզբանէ մի ամենամանչան որդէ սերեցաւ, եւ թէ հետզհետէ յընթացս հազարաւոր ամաց այլ եւ այլ ստորին կենդանեաց կերպարանափոխութեամբ եւ բարեփոխութեամբ զարգացաւ ու զօրացաւ մինչեւ իւր ներկայ կատարելութեան հասաւ, եւ եթէ բնական գիտութիւնք կարենան մեզ ճշմարտապէս յայտնել դեռ աւելի անակնկալ եւ հիանալի եղիլութիւններ, այս ամենը ոչ թէ միայն վնասակար չեն քրիստոնէական հաւատոյս, եւ ամենեւին հակառակ չեն կարող լինել Ս. Գրոց ոգւոյն (որքան որ ամեն տառին ու խօսքին համաձայն չերեւին), այլ ամեն հաւատացեալ քրիստոնէի նուիրական պարտքն է խորին երկիւղածութեամբ ընդունիլ բնութեան այդ յայտնութիւններն, որ ոչ ինչ անջատ լինելու են Ս. Գրոց յայտնութիւնէն, եւ ոչ ինչ նուազ արժանի են իւրաքանչիւր հաւատացելոյ ընդունելութեան քան զյայտնութիւն Ս. Գրոց իսկ: Միով բանիւ՝ եթէ Դարուինականութիւնը, եթէ բնական գիտութիւնը, եւ բնաշրջութիւն կամ շրջափոխութիւնը ստուգիւ հաստատուին եւ ընդունուին գոնէ այդ վարդապետութեանց հետեւողաց կողմանէ,

Թող վստահ լինին որ քրիստոնեայ հաւատացեալն ամենեւին չի դժուարանար այդպիսի բնագիտական ճշմարտութիւններ ընդունելու, բայց անկասկած նշնարտաբխներ լինելու են՝ ամենախիստ քննութեան եւ փորձի ենթարկելի, եւ ոչ թէ լոկ ենթադրութիւններ եւ հաւանականութիւններ: Ս. Աւետարանի ոգին եւ քրիստոնէի զգացումներ վերին աստիճան փափուկ եւ նրբագոյնին են ի մասին ճշմարտութեան . ոչ այլ ինչ բայց եթէ ամենապարզ եւ անկասկած ճշմարտութիւնը կարէ գոհացում տալ քրիստոնէի զգացմանց . եւ մինչեւ Գարուինականութիւն կամ որ եւ է բնագիտական գրութիւն չկարենայ այդ աւետարանական յտակութեան եւ անկասկածութեան աստիճանին հասնել՝ թող Եկեղեցիէն եւ Եկեղեցւոյ հարազատ զաւակներէն որ եւ է ընդունելութիւն չսպասէ:

Եթէ անաչառ հայ ընթերցողը կ'ուզէ գիտնալ թէ Գարուինի վարդապետութիւն ի՞նչ հիման վերայ կրկանգնի, կամ թէ նոյն իսկ նորա ամենաջերմ հետեւողներ ինչ աստիճան վստահութիւն ցոյց կրտան իւրեանց այդ ամենասիրելի վարդապետութեան, թող կարգայ Հանդես Անսորեայի անցեալ Ապրիլի թուոյն մէջ հրատարակեալ Մատենախօսական յօդուածն, յորում յարգոյ յօդուածագիրն Գարուինութեան վերայ գրուած երկու հայերէն գրքերի քննադատութեան առթիւ Գարուինական գրութիւնը ամիոփ կերպիւ կրներկայացնէ ընթերցողին, եւ միանգամայն նորա երկու հայ աշակերտաց աղայական փորձի դժբաղդ անյաջողութիւնը յերեւան կրբերէ:

Եթէ մենք հայերս իրապէս ուսումնական մարդոց հետ գործ ունենանք, այսպիսի վերացական խնդրոց մէջ երկուստեք հասկացողութիւնը կրդիւրանայ: Սակայն դժբաղտութիւնն այն է որ մեր մէջ անհաւատութեան քարոզիչներն « ոչ գիտեն զինչ գործեն ». սրճարաններու եւ գինետանց մէջ, թղթախաղի եւ թախտանատրի գրասեղանի շուրջ սորված մի քանի հակաքրիստոնէական բանաձեւութիւններ արտասանելու զբօսանքը կըլայելին եւ այլոց վայելիլ կրտան: Այդ կարգի դատարկախօսներէն 100 ին 90ը տակաւին չեն հասկացած, — եւ հասկանալէ եւս շատ հեռու են —, թէ Գարուինի գլխաւոր գրքի վերնազիւրն իսկ «Օրիջին օվ Սպիշիզ» ի՞նչ կընշանակէ: Եթէ մեր մէջ բնագիտութեան փորքը ի շատէ տեղեակ անձինք աշխատէին բնագիտական ճշմարտութիւնն աւանդել այն չափով որով

այդ կարեւոր գիտութիւն մինչ ցարզ ուսումնասիրուած է, անհատկածելի եւ անտարակուսելի ճշմարտութիւնն բաժանելով ենթադրութիւններէ եւ երեւակացութիւններէ, կրօնական յայտնութիւնը չիտանել բնագիտութեան հետ, եւ Ս. Գրոց չհասկացած իմաստն չիտեղաթիւրել եւ ապա ծաղրել, արգարեւ գովելի ծառայութիւն մատուցած պիտի լինէին մեր սրճարանաւարտ Գարուհնականաց :

Թող ուսուցանեն այն ճշմարտութիւնն զոր բնական գիտութիւնք մեր դարու մէջ շատ աւելի մանրամասնութեամբ եւ անհունապէս աւելի ընդարձակութեամբ կ'ուսուցանեն քան թէ կարելի էր հին դարու աստուածառաք մարգարէից ուսուցանել իւրեանց ժամանակակից ազգերին : Թող բացատրեն եւ օրինակներով ապացուցանեն թէ ինչքան մեծ եւ ընդարձակ է տիեզերքը, մեր ըմբռնումէն եւ հասկացողութենէն ինչքան վեր . թող խոստովանին մարդկային մտաց փոքրութիւն եւ գրեթէ ոչնչութիւն առաջի այս անհուն տիեզերաց : Թող քարոզեն այն ահաւոր եւ սարսփիչ ներդաշնակութիւնը որ կրտիրէ համայն տիեզերաց վերայ, եւ այն մեծ Ղեկավար Ճարտարապետի գործոց միայն մէկ պղտիկ մասն մեզ կը յայտնէ այնքան՝ որքան հնար է մեզ պէս չնչին արարածոց հասկանալ : Իսկ մնացեալն՝ խորութեամբ, բարձրութեամբ, տեղի տարածութեամբ, ժամանակի անզրաւութեամբ զմեզ ապշութեան մէջ կը թողու : Թող բացարձակ խոստովանին որ բնագիտական այս ճշմարտութեանց եւ կացութեան հանգէպ մարդկային իմացականութիւնը անզոր եւ ինքնին անկարող է :

Մինչդեռ սոսկ մարդկային իմացականութիւն այսքան տկար կը հանդիսանայ առաջի բնութեան եւ տիեզերաց, Աստուածային յայտնութիւնը կը գայ յօգնութիւն, եւ Բանն Աստուած մարդկային մարմին առնելով՝ մեր տկարութեան համեմատ Արարչապետի մեծութիւնը, կամքը, հրամանը՝ մեզ կը յայտնէ : Եւ մինչ նիւթապսշտ ու կամակոր մարդիկ դիտմամբ կ'աշխատին շտեմնել, եւ այլոց տեսնելութիւնը շտալ, Աստուծոյ զօրութիւնը՝ որ իւրեանց սիրած բնութեան մէջ ամէն քայլափոխին կ'երեւի, հաւատացեալ քրիստոնէի համար վերցուած է այդ վարագոյրն, քանի որ «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ՝ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ : »

## ԿԵՐԱՂՆՈՒՄԿ ԴԱՏԻ ՄԷ ՎԵՐԱԳՆՆՈՒԹԻՒՆԸ

(Խորհրդածութիւն Աւագ Շաբաթու)

ԳՐԵԱՑ ՊԱՐՈՆ ՍՒՐԳԻՍ Ս. ՊՍԼԱՊՈՍԵՍՆ

Դիւանապէս Առաջնորդարանին Զմիւռնիոյ:

Ընթերցող, մի՛ զարմանար, վերաքննութիւնը, զոր պիտի ընեմ, չէ՛ մի այնպիսի դատի համար, որ այսօր համայն աշխարհի ուշը կը գրաւէ:

Շատ հին՝ բայց միշտ հանդիսաւոր վերաքննութիւն պահանջող դատ մըն է, որ կը յայտնէ դատաւորական ա՛յն ամենամեծ, ա՛յն ահռելի սխալը, որուն նմանը երբէք չէ գործուած:

Մարդկութիւնը, որչափ ստորնացեալ իսկ կարծուի, պէտք է խոստովանիլ, ի յարգանս նորա, թէ մի արդար զայրոյթ կ'զգայ յաղթանակող անիրաւութեան դէմ: Վասն զի անիրաւութիւնը չէ յաւիտենական. եւ իրաւունքը կը գերազանցէ քան թէ կոշտ ոյժը: Վերջին խօսքը լոյսինն է քան իսուարին: Ուստի պատի՛ւ այն մարդոց, որք յուսալից կըճաւատան այս վերջնական յաղթանակին, եւ ամեն ջանք արիաբար ի գործ կը դնեն փութացնել նորա համաշխարհական տիրապետումը:

Արդէն բազում դարեր սահեցան, անցան, յորմէ հետէ այս դատ գործադրուեցաւ:

Ո՞վ էր ամբաստանեալը. — կար այն ժամանակ անձ մի, հեղ եւ բարեգործ, օժտեալ իբր մի գերագոյն կարողութեամբ, զոր ի գործ կը դնէր յօգուտ տառապելոց առանց խորութեան ազդի կամ կրօնի: Անբիծ էր նորա կեանքը, վե՛հ՝ նորա խօսքերը. սիրոյ եւ գթութեան իրական մարմնացումն էր ինքը: Այս անձ ունեցաւ իւր թշնամիները:

Ո՞վ կրնայ հաւատալ, կարելի՞ է միթէ...:

Այո՛՛ կարելի է. վասն զի ի՞նչպէս չլինէին նորա թշնամի՛ անոնք որ կը քարսէին նորա մաքրափայլ նայուածքէն, եւ խօսքերուն փայլակնացայտ պայծառութենէն: Իրենց խորարմատ ետամոլութիւնն չարաչար կը խայտառակուէր նորա անսահման անձնուիրութենէն, իրենց կեղծուպատիր ոգին՝ նորա սրտի ամենամաքուր յստակութենէն: Ուստի բոլոր չահամոլ վատութիւնք միաբանեցան, ոտիներ խմբուեցան, եւ բանակ կազմեցին անոր դէմ: Զարհուրելի

ստույթիւններ հնարեցին , տոհմային եւ կրօնական հարցեր ի գործ դրին , մինչեւ որ յաջողեցան ի գլուխ հանել զաւր . եւ արդարը ընկճեցաւ :

Ընկճեցաւ վատագի դատաւորի մը առջեւ , որուն անարեկ սրտին վրայ սիրած էր պետական խնդիր , չիմանալով թէ՛ արդարութիւնն է պետութեան առաջին հիմը :

Ընկճեցաւ իւր բարեկամաց թուլութեամբը , որք այն տագնապալից պահուն սարսափահար թողին , լքին զինքը միայնակ սուտ վկայներուն , անիրաւ զատրդներուն եւ դահիճներուն կամքին :

Չկայ ատեանին մէջ ո՛չ փաստաբան ջատագով , ո՛չ վկայ ի նպաստ , ո՛չ յետաձգում , ո՛չ բողոք , ո՛չ մեղմացում պատժի , եւ ո՛չ շնորհում : Ձերբակալուեցաւ գիշերը , դատուեցաւ եւ դատապարտուեցաւ առտու , մեռաւ կէսօր երեք ժամ անցնելով , եւ թաղուեցաւ նոյն օրը :

Անցան մի քանի օրեր , եւ անա իւր բարեկամներն , որք ձերբակալման , դատապարտութեան եւ սպանման ժամերուն վարանոտ կը դողային , յանկարծ մի զարմանալի զօրութեամբ ոգեւորուած , նոցա աչերն ու սրտերն լի՛ տեսակ մի յայտնութեամբ , զոր աշխարհ յիմարութիւն կարծեց . իւր բարեկամներն , կ'ըսեմ , բողոք բարձին կատարուած դատին անիրաւութեան դէմ . վերաքննութիւն , եւ դատապարտելոյն անմեղութեան եւ իրաւանց վերահաստատումը պահանջեցին հրապարակաւ : Նոյն գործը շարունակեցին բաղմաթէ՛ւ անձինք դարէ ի դար , եւ մեծամեծ յաջողութիւններ ձեռք բերին : Ամենաճոխ աշխարհներու ժողովուրդներն եւս համոզուեցան այդ հին դատին անիրաւութեան , եւ հաւատային Մեծ - Դատապարտելոյն բացարձակ անմեղութեան : Պետութիւններն անգամ փառաւորեցին նորա անունը եւ յիշատակը ա՛յն աստիճան մինչ զի իրենց համար փառաց նշան ընդունեցին անոր կախաղանը , որուն վրայ աւանդած էր իւր հոգին :

Սակայն ճիշդը խօսելով անոր դատին վերաքննութիւնը դեռ կը շարունակուի , լրացած չէ : Վասնզի անոր կարծեցեալ ոճիրները , որոց համար դատապարտուեցաւ , դեռ այսօր եւս իբրեւ ոճիր կընկատուին յաչս բաղմաց : Անոր սուրբ սկզբունքները , զորս ջնջելու համար զինքը սպանեցին , դեռ այսօր եւս իբրեւ մոլար եւ կործանիչ սկզբունքներ կընկատուին : Վասն զի դեռ այսօր եւս եթէ մէկը խօսի եւ գործէ ինչ որ կը խօսէր եւ կը գործեր Մեծ - Դա-

տապարտեալը , չեն պակսիր սրտեր զանի նախատելու եւ հարուածելու , եթէ ոչ սպանելու :

Եւ ի՞նչ զարմանք , միթէ կրպակսի՞ն ինքզինքնին լուսաւորեալ համարողներ , որք նորա անպարտակիր մարտիրոսութեան հոգեյոյզ տեսարանին հանդէպ կամովին կամ յանկամ պատկառանք զգալով հանդերձ՝ կատաղի յարձակողներ կըզառնան նորա սկզբունքներուն աշակերտելոց դէմ : Եթէ նոյն ինքն Մեծ-Նահատակը վերագառնար այսօր մեր մէջ , կրկին ի մահ պիտի գատապարտուէր իւր վարդապետութեան համար : Որո՞նց ձեռքով : — Անոնց , որք նորա ջերմեռանդն հիացողներն կրճեւանան , եւ կ'ուզեն այնպէս երեւիլ աշխարհի առջեւ :

Անհրաժեշտ պէտք մըն է ուրեմն սոյն գատին վերաքննութիւնը , որպէս զի աշխարհ , որ այս անմեղ սպանութեան պաշտօնական դաւակիցը եղաւ , ճանաչէ իւր սխալը , եւ դարմանէ որքան կարելի է :

Վասն զի Արդարութիւնն չարսչար նախատուեցաւ յանձին սոյն Արդարոյ , եւ մինչեւ որ աշխարհ պաշտօնապէս չճանաչէ՞ այս անուելի սխալը , ճշմարիտ սէյր չպիտի կրնայ ընդհանուր մուտ գործել աշխարհի մէջ : Միշտ զրկանք պիտի կրեն բարիները չարերէն , տկարները զօրաւորներէն , բարեմիտները խորամանկներէն : Կըշեշտե՛մ , մինչեւ որ Մեծ-Նահատակին անմեղութիւնը , իրաւունքը եւ խորհրդաւոր նպատակը աշխարհ չընդունի սրտովին , մարդկութիւնը չկրնար աշուտանալ իրապէս եւ ոչ իսկ երջանկանալ : Վասն զի այս հրէշային անիրաւութեան հետեւանքն են ուրիշ ամեն կերպ անիրաւութիւններ , որ կը գործուին մարդկութեան մէջ :

Արդ՝ Մեծ-Նահատակը կ'ըսէ , — Պիտի գա՛յ օր յորում գատաստանի նոր ատեան պիտի բացուի , ուր այժմու յանդուզն ամբաստանողներն ակնկոր ամբաստանեալներ պիտի ներկայանան , ուր դիմակները իյնալով պիտի մերկանան իրենց ներքին գարշութիւնք եւ սճիրք . ուր այն սուրբ սկզբունքներն , որոց համար ինքն զոհուեցաւ , հանրածանօթ պիտի լինին իբրիւ յաւիտեանական ճշմարտութիւններ , եւ այդ տիեզերական ատենին Դատաւորը պիտի լինի նոյն ինքն՝ որ Արդարութեան համար զոհուեցաւ , եւ ինքնիշխան զօրութեամբն վերայաւ յերկինս , մինչեւ որ իւր Արդարութիւն լիովին հաստատուի բովանդակ աշխարհիս մէջ :

Գաղափարային է այժմ թէ՛ դատն տեղի ունեցած է գրեթէ երկու տասնեակ դարեր յառաջ յԵրուսաղէմ, ամբաստանողքն է ինչ կայրափայ քահանայապետն, փարիսեցիք, եւ ասոնցմէ գրողուած խուժանն . վճռատու դատաւորն էր Պիղատոս . դատապարտեալն էր Յիսուս Գրիստոս , քան զոր նախամեծար դատեցին զՔարաբբա , ինչպէս որ այժմու «քրիստոնեայ» փարիսեցիք եւս կընախորնարեն իրենց պիւրի բարաբրաները քան Յիսուսի ճշմարիտ հետեւողները :

Սակայն , խաչեալն Յիսուս եղաւ Աստուծոյ Օծեալը , նորա յարութեան վկայքն եղան հրեշտակներն եւ Առաքեալներն , որք հռչակեցին անվեհեր , բայց ոչ ամենուրեք . վասն որոյ պէտք է հռչակուի , եւ համատարած քարոզուի նա Տէր եւ Փրկիչ համայն աշխարհի , ամեն ծունր կրկնուի յանուն Նորա , պէտք է որ Նորա սպանիչներն , փարիսեցութիւն , շահամուլութիւն , հպարտութիւն , վաս կիրքեր , նախանձ , ատելութիւն՝ չքանան , եւ տեղի տան Նորա Անմահ Սիրոյն : Մինչեւ որ այս չլինի՝ ճշմարտութիւն , արդարութիւն , իրաւունք , խիղճ , նոյն իսկ Աստուած՝ բաները կըմնան լսկ բաներ , առանց բարերար ներգործութիւն սզդելու մարդոց սրտին :


Սոյն դատի վերաքննութեան ատեանը բաց է հանապաղ ամեն քրիստոնեայ եկեղեցիներու մէջ , բայց մանաւանդ առաւել հանդիսապէս եւ առաւել սրտառուչ կըբացուի սոյն Աւագ Շաբաթու մէջ : Գնա՛ ուրեմն եկեղեցի , ընթերցող , ունկն գի՛ր Աւետարանին , եւ հանդիսատես պիտի լինիս այս դատին մանրամասնութեանց : Հոն պիտի տեսնես Մեծ - Ամբաստանեալը գիշերանց ձերբակալուած ի Գէթսէմանի , կապուած կըքաշկրտուի յատեան քահանայապետին , կ'ապտակուի կը չարախօսուի , ամբողջ գիշերը կըձաղկուի կըծեծուի , փուշերով կըպսակուի : Աստուկըմատուի պետական դատարանին , գոռում գոչումները կըբարձրանան « ի խաչ հա՛ն , ի խաչ հա՛ն » . կը յանձնուի գահճներուն , խաչ ի յուս կըտարուի ի Գողգոթա տեղի կառափելոյ , կըմերկացուի , հանդերձները վիճակի կըղուին , ի խաչ կըթեւեռուի , ծարաւաւանջ չըթունքին լեղի եւ քացախ կըմատուցուի , իւր Աստուածային եօթն խօսքերով կ'օրնէ համայն տիեղերքը , եւ մի քանի ժամէն կ'անչնչանայ : —

Հոն պիտի տեսնես նաեւ Նորա անմեղութեան վկայները , Պատրոսի դառն լացքը , Մքք . ԻԶ՝ 75 . — Յուզայի՛՝ «մե-

դա՛յ, զի մասնեցի զարիւն արդար» հառաչքը, ՄՏԲ. ԻԷ. 3. Պիղատոսի կնոջ անարեկ սազարարութիւնը, ՄՏԲ. ԻԳ. 19. Խաչակից աւագակին դաւանութիւնը, Ղուկ. ԻԳ. 42, Հարիւրապետին՝ «Արգարեւ այրս այս Աստուծոյ Որդի էր» ազազակը, Մատթ. ԺԵ. 39: Եւ ուրիշ բիւրաւոր վկայներ, որք իրենց արեան մինչեւ վերջին կաթիլը թափելով յայտարարեցին եւ կը յայտարարեն Նոր անմեղութիւնը եւ անհուն սէրը զոհեալ՝ ամբարշտաց ձեռք եւ ամբարշտաց փրկութեան համար: Այս վերաքննութիւնն իւր բիւրաւոր վկայութիւններո ին հանդերձ սահմանուած է տեւել մինչեւ աշխարհիս վերջը:

Քրիստոսի դատին վերաքննութեան ատեանը կը բացուի մա՛նաւանդ երբ քրիստոնեայն կը մտնէ առանձնութեան մէջ, եւ աչքերը յառած խաչեալ Փրկչին կը մտածէ անմուռնջ. ա՛յն Փրկչին՝ որոյ Աստուածային ղէմքը կենդանի նկարուած է Աստուածաշունչ գրոց առաջին էջէն մինչեւ վերջի էջը. — Որ Աստուծոյ յաւիտենական բանն է, պատկեր եւ նկարագիր փառացն Աստուծոյ, լոյսն ճշմարիտ, հովիւն յաւիտենական, զուռն, ճանապարհն, ճշմարտութիւնն, եւ կեանքն, հայր հանդերձեալ աշխարհին, իշխանն խազազութեան, թագաւոր թագաւորաց, եւ տէր տերանց, Աստուած ընդ մեզ:

Քրիստոնեայն իւր անձնաքննական մտածութեան մէջ կ'զգայ թէ՛ իւր գործած մեղքերն են Յիսուսի մահուան բուն շարժառիթն. կ'զգայ թէ ինքն է՝ որ ամեն անգամ որ կը մեղանչէ՝ կրկին ի խաչ կը հանէ զՈրդին Աստուծոյ, Եբր. 9. 6: Եւ այս մտածութեան մէջ կը հալի սիրտը, կը փարի Յիսուսին իբրեւ իւր միակ Փրկչին, եւ կ'ընդունի յաւիտենական կեանքը:



## Ք Ա Ր Ո Չ

(Խօսեցեալ յԱզգային Եկեղեցւոց Մանչեսթրի յերրորդում Կիւրակիի զկնի Հոգեգալստեան յաւի 1896 .)

« Զի Տէր է Եաբարու Որդի Մարդոյ . » — Մատթ. ԺԲ. 8 :

1 . Այս աւուր Աւետարանը կրպատմէ թէ շաքաթ օր մը Յիսուս եւ իւր աշակերտներն արտերու մէջէն կ'անցնէին, եւ աշակերտներն անօթի լինելով սկսան հասունցած ցորենի հասկեր քաղել եւ ձեռքերի մէջ շփելով՝ ցորենն հանել եւ ուտել : Փարիսեցիք զայս տեսնելով՝ կրգայթակղին , որովհետեւ ցորենի հասկ քաղելն ու ձեռաց մէջ շփելն՝ թէպէտ չնչին բայց եւ այնպէս մարմնաւոր աշխատութիւն էր, զոր աստուածային չորրորդ պատուիրանն կ'արգելոյր : Քրիստոս իւր աշակերտաց ընթացքն կ'արգարացնէ Դաւիթ մարգարէի օրինակաւն , որ երբ հարկը պահանջեց՝ հակառակ օրինաց մտաւ Աստուծոյ տունն եւ առաջաւորութեան հացն որ միայն քահանայից համար յատկացեալ էր՝ կերաւ . նոյնպէս օրինակ բերաւ հրէից քահանայներն որ շաքաթ օրն տաճարի մէջ մարմնաւոր կերպիւ կ'աշխատին առանց դատապարտութեան : Աւետարանիչներն այնքան յափշտակուած են Քրիստոսի աստուածային տնօրէնութեանց գէպքերով՝ նորա քարոզութեամբն եւ հրաշագործութեամբքն որ նորա անձնական կենցաղալուծեան վերայ շատ քիչ կրխօսին : Բայց եղածէն մինք կարող ենք փոքր ի շատէ ստուգիւ իմանալ թէ ինչ աստիճանի խեղճ ու աղքատիկ կեանք կրվարէին Քրիստոս եւ իւր Առաքեալք : Մինք լաւ գիտենք որ ոչ Յիսուսի մայրն եւ ոչ նորա հօրուն Յովսէփ կարող էր նիւթական հարստութեամբ պարծենալ . քանզի ինչ պիտի լինէր մյնազարէթցի հիւանազործի եկամուտն . ոչ եւս նորա աշակերտներն հարուստ գերզաստաններէ էին . գալիլեական ծովակի վերայ ձկնորսութեամբ կամ մի այսպիսի հասարակ արուեստով պարապող խեղճ եւ միանգամայն անուս մարդիկ էին : Իսկ այժմ որ իւրեանց սովորական պարապմունքն ու ապրուստի միջոցն թողած Յիսուսին կրհետեւէին , յայտնի է որ բաւական նեղութեամբ եւ դժուարութեամբ միայն կարող կրլինէին իւրեանց առօրեայ հացը գտնել . շատ հաւանական է որ երբեմն եւս անօթի կրմնային, ինչպէս այս անգամն, եւ երբ մի այս-

պիսի առիթ ներկայանար ինչպէս հասունցած ցորենի արտեր՝ առանց շարաթ օր լինելու կամ ուրիշ անպատեհութեան վերայ խղճահարելու՝ բնութեան պահանջն կրկատարէին եւ իւրեանց քաղցն կրհագեցնէին :

2. Պէտք է գիտնանք որ Մովսիսական օրէնք թոյլ կը տար որեւէ արտի մէջէն անցնողներուն՝ հասունցած ցորենի հասկ քաղել եւ ուտել, այլ միայն իւրեանց հետ տանելն կամ փճացնելն սրգելուած էր : Այս է պատճառն որ փարիսեցիք չեն ասեր թէ՛ Գրիստոսի աշակերտք ուրիշի սեփականութիւն կը յափշտակեն, որով ութերորդ պատուիրանի գէժ մեղանշած կը լինին, այլ կ'ամբաստանեն զանոնք՝ Շարաթ օր գործելու յանցանքով : Փարիսեցիք Հրէից ազգի ազգասէր եւ կրօնամոլ դասակարգութիւնը կրկազմէին, որք կը յուսային իւրեանց ազգն Հոովմէական գերութենէ ազատել՝ Մովսիսական օրէնքներն ամենայն ճշդութեամբ կատարելով եւ ամէն տեսակ օտար սովորութիւններէ խորշելով : Սկզբունքն շատ լաւ էր, այլ գործարարութեան մէջ յոյժ թերի կը գտնուէին : Մինչդեռ արտաքին ծիսակատարութեանց եւ սովորութեանց մէջ վերին աստիճան բծախնդիր էին եւ խօսքով ու զգեստով ու շարժուածքով սրբութեան եւ առաքինութեան տիպ կը կրէին, իւրեանց առանձին վարքն ու կենցաղավարութիւն ըրպէս եւ իւրեանց ոգին ու զգացումն շատ աւելի գէշ էր քան թէ անոնցն՝ որք բացարձակապէս մեղաւոր եւ ամբարիշտ հուշակուած էին :

3. Գրիստոսի բռնած ընթացքն տարբեր էր. նորա համար արտաքին ծիսակատարութիւն ըստ ինքեան նշանակութիւն չուներ . Աստուածային օրինաց ոգին էր նորա ընդունածն . կեղծաւորական խարութիւն եւ սնապաշտութիւն Գրիստոսէն շատ հեռի էին . նա ինքն օրէնսդիրն էր եւ գիտէր օրինաց բուն զօրութիւն եւ իմաստ . նա գիտէր թէ՛ «Հոգի է Աստուած եւ ճշմարիտ երկրպագուացն պարտ է հոգևով եւ ճշմարտութեամբ երկիրպագանել :» Մենք գիտենք որ քառասուն օր բոլորովին անսուաղութեամբ ծով պահեց եւ յաճախ երկար ժամանակ լեռների վերայ եւ անապատների մէջ պահօք եւ աղօթիւք կ'անցնէր . բայց ատելի էր Գրիստոսին փարիսեցւոց պահեցողութիւն եւ հրապարակաւ աղօթելու ցուցամոլ ձեւերն : Գրիստոսի աշխարհիս վերայ անցուցած ամբողջ ժամանակ մի մեծ շարաթ էր, այնքան սուրբ էր նորա ընթացքն, այն-

քննան անխարդախ եւ յսեմ նորա նպատակն . բայց եւ այնպէս փաթիսեցւոյ շարաթ օրը սուրբ պահելու կեղծուպանիր ձեւերն ու կանոններն բոլորովին ասելի էին մեր Փրկչին , եւ յաճախ Հրէից բամբասանաց ու զրպարտութեան առարկայ կըլինէր՝ փարիսէականոց կանոնները զանց առնելուն պատճառաւ : Նորա հրաշքները տեսնելով կըսքանչանային , նորա քարոզութեանց վերայ կըհիանային , բայց հրէական աւանդութեանց մասին այնքան անտարբեր ըինեցն զանոնք խորապէս կըվիրաւորէր : Երբեմն հիւճանդներ կըտանէին Յիսուսի մօտ շարաթ օր որպէս զի տեսնին թէ նա կըբժշկէ : Նորա միջոցաւ հիւանդութենէ առողջացեալներին կ'ասէին թէ Յիսուս ոչ թէ Աստուծոյ աջակցութեամբ այլ «Բէեղգիբուզաւ իշխանաւ գիււայն» կըբժշկէ , քանզի պատճառ կըբերէին թէ կարելի չէ որ Աստուածասէր կամ Աստուածառաք մէկն յԱստուծոյ հաստատեալ շաթաթն չ'պահէ : Ի ծնէ կոյրն բժշկելու առթիւ մի տեսակ գատական նարցաքննութիւն կատարեցին , եւ երբ տեսան որ վկայութիւնն ի նպատ Գրիստոսի էր՝ դարձեալ հակառակ վճիռ տուին ասելով . «Տոբ փառս Աստուծոյ յմեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է :» Գրիստոսի պատանխանն աջապիսի գէպքերի մէջ այն էր թէ . «Պարտ է ի շարաթուբարիս գործել» , եւ Հին Կտակարանաւ ու Հրէական առօրեայ կեանքէն առնուած օրինակով կըհաստատէր՝ որ շաթաթ օր բարի գործելն ներելի է , ինչպէս երբ մէկու ոչխար կամ եղ շարաթ օրն խորխորատի կամ մի մեծ փոսի մէջ ինայ , նորա տէրերն կարող են եւ պարտաւոր են անմիջապէս զայն այն տեղէն հանելու ձեռնարկել :

4. Շարաթ օրն սուրբ պահելու առաջին ակնարկութիւնն կըգտնենք ստեղծագործութեան պատմութեան մէջ , ուր կըպատմուի թէ Աստուած զերկինս եւ զերկիր եւ զամենայն որ ինմա վեց աւուր մէջ ստեղծելէն վերջ , եօթներորդ օրն հանգեաւ , այսինքն , գործելէ դադար առաւ . «Եւ օրննեաց Աստուած զօրն եօթներորդ , կ'ասէ Ս. Գիրք , եւ սրբեաց զնա . զի ի նմա հանգեաւ յամենայն գործոց իւրոց՝ զոր սկսաւ առնել Աստուած :» Այս պատմական ակնարկութիւն հետզհետէ օրէնք դարձաւ եւ վերջն ալ Տասնարանեայ պատուիրանաց կարգին մէջ չորրորդ տեղը բռնեց : Տասնարանեայ պատուիրանաց մնացեալ յօդուածոց պէս Չորրորդ պատուիրանն եւս մեծ սրբութիւն ունէր Հրէից համար , եւ իւրեանց նախնեաց

բազմաթիւ վեղծումներէն ու զանցառութիւններէն եւ այդ առիթներով կրած շարաչար պատիժներէն խրատուելով՝ մեծադիպուածութեամբ այդ օրէնքը կը պահէին, բայց ոչ թէ ըստ Գործոյն, այլ ըստ արտաքին հանգամանացն :

5. Սակայն Քրիստոսի հետեւած ճանապարհն՝ ինչպէս բոլոր Տամարանեայ պատուիրանաց նոյնպէս եւ այս պատուիրանի մասին՝ հիմնովին կը տարբերէր փարիսէական ըմբռնումէն . նորա համար ոչ թէ միայն մի պատուիրանի փրական զանցառութիւնն մեղք էր, այլ նաեւ այդ մեղքին առիթ՝ տուող խարհուրդն : Նոյնպէս Շաբաթ օրը սո՛ւրբ պահելու մասին բանիւ եւ գործով ցոյց կը ըստայ որ սոսկ անգործութեամբ պատուիրանը պահած չենք լինիր, այլ գործելով ինչ որ սուրբ է, ինչ որ բարի է, « եւ միայն հրաժարիմք այն բաներէն որ անսուրբ են, այսինքն աշխարհային կամ անձնական եւ նիւթական օգտի համար են, քանզի աստուածային հրամանն է « յիշեալիբ զօրն շաբաթուց թրբել զնա » : Ո՞վ չի կարող տեսնել որ աւելի ծանր պատուաւորութիւն է բարի գործել քան թէ բոլորովին անգործ նստիլ : Հրէական աւանդութիւնն եւս կ'արտօնէր այն բոլոր գործերն որ կրօնի եւ աստուածային պաշտամանց կը վերաբերէին, ինչպէս՝ Քրիստոս եւս անոնց օրինակն յառաջ կը բերէ թէ « ի շաբաթս քահանայքն ի սաճարին պղծեն զշաբաթն, եւ անմեղք են » : որով կ'երեւի թէ ինչ որ կրօնի եւ բարեկաշտութեան կը վերաբերի շաբաթ օր գործելը շատ յարմար է : Միւս բացառութիւնն կամ ներելի առիթն եւս այն է երբ մի ստիպողական դէպք մեր անմիջական գործելն պահանջէ . ինչպէս Քրիստոսի արած բժշկութիւնն . ներս կամ մի այնպիսի դէպք որոյ մէկ օրինակն յառաջ կը բերէ ստեղծով՝ « Ով իցէ ի ձէնջ մարդ, որոյ իցէ ոչխար մի եւ անկանիցի այն ի խորխորատ ի շաբաթու, միթէ ո՞չ ունիցի եւ յարուցանիցէ զնա եւ այլն » : Ուստի կը հետեւի Քրիստոսի քարոզութիւնէն թէ շաբաթ օր ներելի է գործել նախ բարեկաշտական կամ կրօնական գործեր, երկրորդ առաքինութեան եւ սիրոյ գործեր, երրորդ այնպիսի ստիպողական գործեր, որոց ուշանալն կարող է աղետալի կամ վնասաբեր հետեւանքներ ունենալ :

6. Քրիստոսի այս ողջամիտ վարդապետութեան եւ օրինակին հետեւեցին սրբազան Առաքեալք եւ առաջին դարու հաւատացեալք, միայն այն սարբերութեամբ որ հետզհետէ կիրակի օրն շաբաթ օրուայ տեղը բռնեց :

Քրիստոսի հրաշափառ յարութեան օրն մի մեծ եւ անջնջելի տպաւորութիւն դորձած էր իւր առաջին հաւատացելոց վերայ, քանզի այդ էր քրիստոնէական կրօնի յաղթութեան օրն, եւ սովորութիւն դարձաւ ամէն միաշաբաթ, այսինքն կիւրակէ, ժողովուրի միասին, յիշել Քրիստոսի փրկարար տնօրէնութիւններն եւ մասնաւորապէս նորա յարութիւնն ի մեռելոց, Ս. Հաղորդութեան խորհուրդն կատարել, նորա Սուրբ Աւետարանն կարդալ, եւ այլ այսպիսի հոգեւոր կրթութեամբ ամբողջ օրն նուիրել Քրիստոսի յիշատակին: Սոյն պատճառաւ օրուայ անունն եւս փոխուեցաւ, մինչ յառաջ կըրկոչուէր Միաշաբաթ, յետայնու կիւրակի կամ կիւրակէ անուանեցաւ, որ յունական բառ է եւ կընշանակէ տէրունական. երբեմն եւս կըրկոչուի օր տէրունական կամ յունարէն յեւեռա կիւրակի. բայց դիւրութեան համար սովորաբար սոսկ կիւրակէ կըրկոչուի առանց հայկական Օր կամ յունական յեւեռա բառն հետն կցելու:

Նախկին դարերում գտնուեցան քրիստոնեայք եւս, որք թէ շաբաթ օրը սուրբ կրպահէին եւ թէ կիւրակէին Քրիստոսի յարութեան յիշատակը կրկատարէին: Բայց յընթաց ժամանակի կիրակին աւելի նախամեծար համարուելով՝ շաբաթ աւուր կարեւորութիւնն հետզհետէ պակասեցաւ: Բայց եւ այնպէս շաբաթ օրն մնաց եկեղեցւոյ մէջ իբրեւ մի տեսակ կէս սուրբ օր, եւ այս է պատճառն որ մեր եկեղեցւոյ մէջ նշանաւոր սրբոց տօներն ընդհանրապէս շաբաթ օր կրկատարուին, եւ մեծ քաղաքաց մէջ շաբաթ օրն եւս Ս. Պատարագ կրմատուցուի: Այս փոփոխութիւն այն հիման վերայ եղաւ թէ՛ քանի որ Աստուած պատուիրած է եօթն աւուրց մին սուրբ պահել, եւ այժմ կիւրակին շնորհիւ յարութեան Տեառն անհամեմատ մեծ սրբութեամբ կրպահուէր՝ Աստուածային հին պատուիրանն միացրին տէրունական աւուր խորհրդոյն հետ, եւ մի կերպով հաստատեցին Քրիստոսի այն խօսքն թէ «Տէր է շաբաթու Որդի Մարդի»:

7. Բարեբախտ էք դուք, սիրեցեալքդ ի Քրիստոս, որ կ'ապրիք մի այնպիսի ազգի եւ երկրի մէջ ուր Տէրունական օրը գրեթէ ծայրայեղ խստութեամբ պահելու սովորութիւն կըտիրէ: Լաւ է դէպ ի բարին ծայրայեղ օրինակ ունենալ մեր յառաջ քան թէ դէպ ի չարն, քան թէ սուրբ օրն թուրութեամբ եւ անտարբերութեամբ գուցէ եւ մեղ-

սառիթ զքօսանքներով անցնելու օրինակ: Արդէն եթէ այս բարի օրինակն եւս չունենայինք մեր առաջն, մենք պիտի կարենայինք մեր օրինապահութեամբն օտարազգեաց բարի օրինակ հանդիսանալ, քանզի մենք կը պարծինք քրիստոնէական հաւատն իւր նախնական պարզութեամբ ու անարատութեամբ պահպանած լինել. ուստի մենք աւելի քան թէ մեր զրացիք պիտի աշխատինք մեր կեանքովն ու ընթացքովն ապացուցանել թէ «Տէր է շաբաթու Որդի Մարդոյ: »

8. Տէրունական օրը արժանավայել կերպիւ պահելու մեր առաջին եւ անխուսափելի պարտաւորութիւնն է մեր սովորական աշխարհային զբաղումներէ բոլորովին հեռու կենալ, ամենայն վատահոլութեամբ հաւատալով որ կիրակի օրուայ աշխատութիւնն ոչ թէ միայն օգուտ չունի, այլ բացարձակապէս լիստ է. պէտք է հաւատանք որ Աստուծոյ օրհնութիւն մեր գործի յաջողութենէն կը պակասի, եթէ ուղեւանք կիրակի օրն աշխատել: Եթէ օրէն մին միտքն ու մարմինն աշխատութենէ հանգստացնելն, ինչպէս գիտէք, բնական օրինաց գրեթէ մի անհրաժեշտ պահանջն է. մարդոյս մարմինն ալ կը տկարանայ միտքն ալ կը մաշուի, եթէ անընդհատ եւ առանց պարբերական դադարի՝ մեր սովորական գործերովն պարապինք:

9. Բայց մեզ քրիստոնէիցս համար Տէրունական օրն շատ աւելի բարձր եւ վսեմ նշանակութիւն ունի քան թէ սոսկ մարմնաւոր օգտակարութիւնն: Տէրունական օրն որ Քրիստոսի յարութեան յիշատակին նուիրուած է՝ նախկին քրիստոնէից համար էր եւ մեզ համար եւս պիտի լինի, եթէ հաւատացեալ քրիստոնեայք կ'ուզենք լինել, ամենամեծ հոգեւոր սփոփանաց եւ հոգեւոր ուրախութեան օր. պիտի ուրախանանք՝ հրճուինք Քրիստոսի այդ մեծ յաղթանակովն: Մարդկօրէն խօսելով՝ Քրիստոսի մահուամբն քրիստոնէութիւնն աշխարհիս երեսէն ջնջուած պիտի համարուէր, եթէ մեր Փրկիչն ի մեռելոց յարութիւն չաւնէր. նորա յարութեամբն մեր Սուրբ Աւետարանն հիմնական հաստատութիւն ստացաւ աշխարհիս վերայ: Նոր Կտակարանէն կը տեսնենք որ Սրբազան Առաքեալք շատ կը սիրեն իւրեանց քարոզութիւններն գլխաւորապէս Քրիստոսի յարութեան վերայ հիմնել. քրիստոնէութեան աստուածային կրօն լինելու ամենամեծ ապացոյցն այդ հրա-

չալի յարութիւնն էր : Այս ցնծալից յալթութիւնն մեր մտաց վերայ լաւ տպաւորելու համար է որ մեր Եկեղեցին ամէն կիւրակէ իւրաքերից կոչուած Աւետարանն հանդերձ իւր նախընթաց եւ յաջորդող երգոց եւ աղօթից կրկարմայ ի լուր հաւատացելոց, երբ քահանայն սպիտակազգեստ խորանէն կ'երնէ խնկով եւ մոմեղինօք, եւ կրկրկնէ այն մեծ աւետիսն որ մերձ 1900 տարի ամէն կիւրակէ կրկնած է : Ժողովուրդն եւս մեծ ոգեւորութեամբ կընդունի այդ աւետիս եւ կ'երգէ «Փառք յարութեան քո Տէր . ոչ յաղարեցայց Գրիստոս օրհնել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ :» Տէսէք որքա՞ն հրճուալի է սարկաւազի քարոզն որ այդ երգին կըյաջորդէ . «Զուարճացեալքս մեծաւ ոգեւորութեամբ յարութեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի , որ եղև պտուղ եւ անդրանիկ ամենայն ննջեցելոց . խորտակեաց զդրունս դժոխոց եւ ելոյժ զըռնութիւն մահու . եւ ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան :» Աւա՛ղ թէ որքան դժուար է ներկայ ժամանակի անտարբերութեան եւ սրտից թուլութեան եւ թմրութեան հանդէպ երեւակայել այն մեծ ոգեւորութիւն որ իւրաքանչիւր Տէրունական օր նախկին հաւատացեալներին կրպատճառէր : Եկեղեցին կրպահանջէ որ իւրաքանչիւր կիւրակէ մեր խորհրդածութեան գլխաւոր առարկայն այս լինի , եթէ մենք մեր հոգւոց փրկութեան համար փոյթ ունինք :

Թոյլ տուէք , սիրեցեալքդ իմ ի Քրիստոս , որ նկարագրեմ թէ մի հայ քրիստոնեայ ընտանիք ինչպէս պիտի կիւրակի օրն պահէ : Առաւօտուն կանուխ արթննալ , Հայոց սովորութիւնն է արեւու ծագման հետ մէկ տեղ , պատրաստուիլ եւ անսուաղ եկեղեցի երթալ : Այլ որովհետեւ այս երկրի տեղական եւ ընկերային հանգամանքներն առ այժմ՝ չեն ներեր որ այս հայկական սովորութեան համեմատ վարուիք , ես ալ մի այնպիսի կանոն չեմ ուզեր առաջարկել որ չէք կարող պահել : Ուստի եկեղեցի գնալէն եւ ամենայն ջերմեանդութեամբ ձրազան պաշտամանց մասնակցելէն վերջն պարտաւորութիւն աւարել տան մէջ եւս գոնէ մէկ երկու ժամ կրօնական կրթութեամբ պարապիլ : Ծնողք ինքեանք բարի օրինակ ցոյց տան եւ ստիպեն որ իւրեանց զաւակունք եւս հետեւին : Ընտանեաց մեծն , հայրն կամ մայրն , Սուրբ Գիրքն կար-

դայ եւ բացասութիւն զաւակներին, իւրաքանչիւր կիւ-  
րակի մի քանի հատուածներ ընտրէ եւ իւր զաւակներին  
աւանդէ հանդերձ հարկաւոր խրատական չափացատրութեամբ.  
կամ իւր համախմբեալ ընտանեաց պատմէ սրբոց վարքն,  
մեր երանանշորհ հայրապետաց նահատակութիւններն յի-  
շիւ, մեր եկեղեցւոյ թէսէն ըւ արարողութիւններն որ-  
պէս եւ վարդապետութիւններն մեկնել մի ըստ միովէ,  
որքան որ նա ինքն գիտէ եւ կարող է:

Երկրորդ՝ քաջալերէ իւր զաւակներին եւ իւր տան մէջ  
դտնուածներին մի քանի ժամ լռիկ ընթերցանութեամբ  
գուցէ եւ առանձնական աղօթքով պարապել, եւ կարգադրել  
որ այս ինչ որոշեալ ժամանակին տան մէջ կատարեալ  
լռութիւն տիրէ: Հարկաւ պէտք է նաեւ ըստ սովո-  
րութեան թեթեւ եւ անմեղ սքօսանքի ժամանակ եւս  
յատկացնել մարմնոյ առողջութեան եւ մտաց զուար-  
թութեան համար:

Երրորդ՝ պէտք է ձեր տուներու մէջ եկեղեցւոյ երգերն  
ու շարականներն որքան որ կարելի է երգէք, եւ եթէ չգի-  
տէք՝ սովորիք երգել, եւ յատկապէս կիրակի օրն շատ եր-  
գէք: Այս երգասէր եւ երաժշտասէր երկրի մէջ որ գրեթէ  
տուն չկայ առանց երաժշտական գործեաց եւ առանց եր-  
գեցողի, ինչու՞ համար չպիտի կարենամք այդ գեղեցիկ ար-  
ուեստէն մեր եկեղեցւոյն եւս բաժին հասցնել: Եթէ ճշմարիտ  
է որ Եկեղեցին մեր փրկութեան միակ գաւիթն է, ապա  
ուրեմն պէտք է Եկեղեցւոյ սահմանեալ բոլոր աղօթքներն  
եւ երգերն, նորա քարոզներն եւ կարգուկանոնն մեզ  
ամենէն աւելի սիրելի լինին: Եթէ մեր եկեղեցական  
երգեցողութիւնն այնքան կանոնաւոր չեն երեւիր ինչ-  
պէս եւրոպացւոցն, եւ ինչպէս աշխարհային երգեցո-  
ղութիւն, այդ կրնչանակէ որ մենք զայն կանոնաւորելու  
փոյթ չենք տանիր: Ձերմապէս կըյանձնարարեմ երաժշտա-  
սէր տիկիներէրիդ եւ օրիորդներիդ մեր եկեղեցական շարա-  
կանաց եւ երգոց ուշադրութիւն դարձնէք եւ երբեմն եւս  
ձեր տուներու մէջ դաշնակի ձայնով մեր սրբազան երգերն  
ձեր տուներու մէջ հնչեցնէք: Չկարծէք որ շարական  
երգերն քահանայից եւ տիրացուներին կըվայելէ որ միայն  
եկեղեցւոյ մէջ երգեն. ո՛չ երբէք. ձեզմէ իւրաքանչիւրին  
նոյնքան կըվայելէ (եւ գրեթէ նոյնքան պարտաւոր էք)  
երգել եւ աղօթել որքան քահանային: Ես վստահ եմ  
որ եթէ դուք մի անգամ մեր եկեղեցւոյ կանոնաւոր երգե-

ցողութեան ճաշակն առնէիք, մանաւանդ երբ կանացի եւ մանկական խառն ընդ այրական ձայնից՝ երգեհոնի ներդաշնակութեամբ կերգուի, այն ժամանակ մեծ զուարճութիւն պիտի համարիք երեկոներն հաւաքուիլ ի միասին եւ միաձայն երգել մեր նախնիքներէ մնացած Աստուծոյ փառաբանութիւնն եւ օրհնելութիւնն:

Ահաւասիկ Տէրունական օրն արժանաւայել կերպիւ պահելու կանոնն այս է, եւ այն հայ քրիստոնեայ հայրն կամ մայրն որ կըբաղձայ իւր զաւակներովն հանդերձ երկնային անթառամ պսակին արժանանալ եւ Աստուծոյ հրեշտակաց հետ յաւիտեանական կիւրակէ պահել ու կատարել թող այժմէն վարժուի երկնային սրբերգութեանց եւ թող իւր տունն այնպէս կառավարէ եւ կարգադրէ, որ առանց որ եւ է խոչնդոտի կարող լինի Տէրունական օրն ոչ թէ հրէական մոլեռանդութեամբ եւ փարիսէական կեղծաւորութեամբ, այլ ճշմարիտ քրիստոնէական ազատութեամբ եւ հոգեւոր զուարթութեամբ պահել, որպէս զի կարող լինինք պարծանօք խոստովանիլ թէ աշակերտ եմք այն երկնային Վարդապետին որ ասաց. «Տէր է շաբաթու Որդի Մարդոյ.» որում վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս. Ամէն:



## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԳԻՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ, — Նոր Բաղդիբի պատկերազարդ Ֆրանսահայ. Հասոր Առաջին. — Փարիզ 1900:

**Շ**նորհակալութեամբ ստացանք Իշխան Գուխտոն Ղևն հատորն: Մեր նպատակէն եւ կրօնաթերթիս սահմանէն դուրս է այս ընտիր երկասիրութեան վերայ քննադատութիւն գրել. բայց եւ այնպէս չենք կարող զանց առնել մեր առ Մեծարգոյ Հեղինակն շնորհակալութեան հետ մէկտեղ՝ մի քանի խօսքով բացատրել մեր ընթերցողայ բառգրքիս մեծ արժանիքն:

Իրիքը ձեռք առնելուդ պէս առաջին աչքի զարնող կէտն է այն կարի համառօտ եւ համեստ Նախաշաւիղը (յառաջաբան) որով 1060 մեծագիր էջերէ բաղկացեալ՝ մանր այլ պարզ եւ մեծ խնամքով տպագրեալ այս առաջին հատորը կրսկսի: Ահաւաստիկ ամբողջ Նախաշաւիղն. —

«Սոյն երկասիրութիւնն պատրաստած ժամանակս, իմ փոփոզն եւ միակ մտածութիւնն եղած են՝ օգտակար լինել Ազգիս եւ Հայրենակցացս:

Եթէ յաջողեցայ սոյն դժուարին ձեռնարկին մէջ, ա՛յս պիտի լինի իմ վարձատրութիւնն եւ փառքն:»

Իշխան Լուսինեանի այս պարզ ու անկեղծ զգացմանց ամենափայլուն ապացոյցն է Բաղդիբքն իսկ, որ տարիներու տքնաջան աշխատութեան արդիւնք է անշուշտ: Ազգային թերթերի եւ հանդէսների մէջ երկար քննադատութիւններ հրատարակուած են արդէն՝ սորա գրական եւ լեզուաբանական ընտիր եւ աննման յատկութիւններ յերեւան բերելով: Անուբանալի է որ Գաղղիական լեզուն եւ կրթութիւնն մեր Ազգի արեւմտեան մասին վրայ մեծ ազդեցութիւն ունեցած է եւ զիս կըշարունակէ ունենալ: Տաճկանոց լրագիրներ եւ աշխարհաբար գրքեր երբեմն կը վիտային գաղղիաբանութեամբք եւ գաղղիական բառերի ստրկային եւ ծաղրալի թարգմանութեամբք. եւ մեր նոր գրագէտներ գաղղիերէն կըխորհէին եւ հայկական գիրերով կըգրէին: Գաղղիաբանութիւնը այն աս ո՛րձան ընդհանրացաւ Արեւմտեան Հայոց մէջ որ մինչեւ իսկ գաղղիերէն չգիացող անձինք սկսան այդ նորամուտ ոճեր եւ դարձ-

ուածներ գործածել, եւ տակաւին գործ կ'ածեն: Հարկաւ անկարելի էր Հայոցս համար եւրոպական ազգաց հետ շփուիլ սաւանց նոցա լեզուի ու մտածման եղանակի ազդեցութիւնը կրելու. եւ ցանկալի եւս էր որ մեզ պէս մի կղզիացեալ Արեւելեան ազգ օգտուէր եւրոպացւոց աւելի զարգացած քաղաքակրթութենէն, ինչպէս մեր նախնիք օգտուեցան յունաց քաղաքակրթութենէն: Մակայն այս փոխառութիւնը պէտք է որոշ կանոնաց եւ օրինաց համեմատ կատարուի, այնպէս որ մեր լեզուի ու գրականութեանը բնորոշ յատկութիւնը չկորսուի նոր գրականութեան մէջ, այլ ընդհակառակն, եւրոպական գաղափարներ եւ ոճեր բոլորովին Հայասան, որպէս զի բնիկ Հայը առանց եւրոպական լեզուի ծանօթութեան՝ կարենայ ըմբռնել փոխառեալ խօսքն կամ գաղափարն:

Որքան հնար եղաւ մեզ վերիվերոյ տեսութեամբ նկատել իշխան Գուխտոնի Բառգիրք այս կերպով գաղղիական գրականութենէ օգտուելու ամենալաւ գործիքն է: Եթէ յետայսու մեր երիտասարդ գրագէտներ շարունակեն գործածել այն անհեթեթ գաղղիաբանութիւնը որում ամեն օր կը հանդիպինք Հայ լրագրաց եւ թարգմանութեանց մէջ, յանցանքը պիտի լինի՝ այս սքանչելի երկասիրութենէն օգտուիլ չկարենալուն:

Չենք կարող սոյն համառօտ դիտողութիւնը փակել առանց ակնարկելու Բառգրքիս գեղեցիկ ու ամիոփ տպագրութեանը: Այս մէկ հատորին մէջ մի քանի հազար ամենընտիր պատկերներ զետեղուած են (գրեթէ ամեն երես մի քանի հատ ունի): Պատկերներն ոչ թէ միայն դարդարանքի համար են, այլ իրապէս կարեւոր իրեր պատկերացնելով լուսաբանելու կը ծառային: Բուսաբանութիւն եւ կենդանաբանութիւն, ճարտարապետութիւն եւ ամեն ձեռագործ եւ մեքենաշարժ արհեստք իսկութեամբ ինն նկարագրուած են: Նոյն իսկ գաղղիերէն չգիտցողն կարէ մեծապէս օգտուիլ սոյն Բառգրքէն: Եթէ կուզես գիտնալ թէ այս ինչ բոյսը կամ ծաղիկն կամ կենդանին ինչ կը կոչուի Հայերէն, կամ մէկ տեսակն միւսէն որոշիլ, կամ այս ինչ մեքենայն կամ գործիքն կամ որեւէ իր, որոյ գաղղիական անունը գիտես, ինչպէս կոչելու է Հայերէն, Լուսինեան Բառգիրքը ա՛ն քեզ առաջնորդ:

Եթէ Լուսինեան ուրիշ ոչ ինչ երկասիրութիւններ հրատարակած լինէր, միայն այս Բառգիրքը կը բաւէր նորա

անուանել անվանացնելու, եւ Մեծարգոյ Իշխանի անուան հետ չուպաղայ հայ սերունդին աւանդելու փառաց այն յիշատակն, որ եւրոպացի երեւելի բառազրոյց հեղինակներին վիճակուած է մինչեւ ցայսօրք:

Երկասիրութեանս սոյն առաջին թղթակալմ հատորն, կժախուի 25 ֆրանքի:

ԱմբողջԵրկասիրութիւնն կկազմէ երկու շքեղ հատորներ, որոց վերջինն եւս, որ մերձ է յաւարտումն, պիտի ծախուի գարձեալ 25ֆրանքի:

Պէտք է դիմել առ ՄԱՏԵՆԱԳԻՐՆ Ի Փարիզ կամ Ի ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ Սեղբոս խան, քիւ 5, ՂԱԼԱՌԻԱ Կոստանդնուպոլիս):

**ՅՐԷՏԷՐԻՒՔ ՄՈՒՐԱՏԵԱՆ.** — Արարտ եւ Մասիս. Ուսումնասիրութիւնք հայ հնախօսութեան ու դպրութեան վրայ. Հայտնիքի. 1901:

Գերմաներէն գրուած հայագրի հեղինակին սոյն գիրքը որ 104 էջերէ կը բաղկանայ, սքանչելի ամիսփում մըն է ուր քննական հայեացքներուն այն բոլոր պատմական, հնախօսական, գրական խնդիրներուն վրայ որ կը յուզուին հայ ազգի ծագումին, երկրին եւ անունին շուրջը:

Պէտք է նոյն թղթի վրայ միւրեւեղական պարագումի մը յորդորը գրդիւ եղած է, եւ կամ Գերման կրթութեան ու միջավայրին ազդեցութիւնը պատճառ եղած է որ այնքան մանրամասն ու ճայրայիր վկայութիւններ, կոչումներ, յիշատակութիւններ մէջ բերուած ու զետեղուած են զանազան աղբիւրներէ, օտար թէ ազգային, որոնք կուռ իրարու ետեւէ կուգան ամէն էջի մէջ ու ներքոյ: Եւ ոչ մէկ հեղինակ մոռցուած է որ կրնայ լոյս արձակել հայոց հին պատմութեան վրայ:

Ո՞րչափ հեռու ենք Ինձիճեանի հնախօսութեան օրերէն, երբ օտար աղբիւրներ այնքան քիչ կրնային մուտ գանել ու կէր ունենալ մեր ազգի պատմութեան ու հնախօսութեան վերաբերեալ տեսութեանց մէջ: Ո՞վ կրնար այն ատեն համարձակիլ գիրակազութիւն տալ օտար քան ազգային պատմիչներու: Այդպիսի քանդակութիւն մը լրումն պիտի համարուէր գահալէժ գատումի, եւ նոյն իսկ ամպարչաութիւն. տեսակ մը նուիրում օտար զից եւ լքում ազգային տաճարին:

Իսկ հիմա ո՞րչափ բան ստիպուած ենք մոռնալ մեր պատ-

միջներէն , եւ ո՛րչափ բան ուսնել օտարներէ մեր երկրին ու ցեղին պատմութեան վրայ . օրինակի համար , ամենահին ժամանակներու Ուրարդուի եւ Վանեանց պետութիւնը , Նոր Արիական հայերու եկեորութիւնը , Արմին , Փռիւզացի , Ասքանագ , Թորգոմ եւ այլ անուններու նշանակութիւնը եւ ուղիղ ստուգարանութիւնը , եւ այլն եւ այլն : Այս ամենը առանց վարանելու կամ զիջումներ ընելու ձախող աւանդամուտութեան՝ կրներկայացնէ հեղինակը իբր պտուղ նոր հետազոտութեանց :

Սակայն կայ կէտ մը , — ո՛հ փոքր կէտ չէ այն , այլ հսկաներու հսկան , — այն է Տապանին հանգչած լեռը՝ զոր զոհել օտարներու , զեռ սիրտը չտանիր հեղինակին , եւ ինչպէս սովորական է , իր միտքը կը ճգնի սրտին զօրավիզ ըլլալ՝ եւ իր ճարտարութեան ու հմտութեան գանձերէն հանելով ուժ տալ : Արդարեւ կը բազմայ որ Տապանընկալ լեռը մնայ հայոց : Ուստի հեղինակը հայ աւանդութիւնները մէջ կը բերէ ցուցնելու համար թէ Մասիս պէտք է լինի այդ լեռը , թէ Մասիս է հին անունը Արարատ լեռան , թէ Բուզանդի մէջ Կորդուաց մէկ լեռան ընծայուիլն այդ պատուի՝ յետամուտ յաւելուած մըն է ասորական ազդեցութեան ներքեւ : Հեղինակը ցոյց կուտայ թէ Կորդուաց լեռան աւանդութենէն շատ աւելի հին է քաղաքականը զոր Գէորգ Սմիթ 1876ին ծանօթացուց իր Գաղղիական Մեռուդ գրքին մէջ , եւ որուն համեմատ Նիզիլ լեռան կամ լեռնաշղթային վրայ հանգչած է Տապանը : Այս վերջնոյն տեղը որոշելու առթիւ հեղինակը մէջ բերելով աշխարհագիրներու վկայութիւնը՝ կը յանդի սա հայեացքին թէ Նիզիլ անունով ուրիշ բան չէր իմացուեր եթէ ոչ հիւսիսային սահմանադաւառներու բարձր խիստ բարձր լեռ մը որ չկրնար լինիլ ուրիշ լեռ , ըստ հեղինակին , եթէ ոչ Մասիս որուն տրուած անվաններէն եւ վերագիրներէն — հայ պատմիչներու եւ երգերու մէջ — զօրեղ ապացոյց կը կարծէ գտնել հեղինակը իր այս հացեացքին : Գեղեցիկ ջատագովութիւն ազգային աւանդութեան , եթէ սակայն աւելի ամուր հիման վերայ ըլլար հաստատուած : Դժբաղդարար քան զայս աւելի հաստատ երեւցած ու յարգ ստացած աւանդութիւններ սրբած , տարած է քննութիւնը :

« Նախ իջեան » բառին ստուգաբանութենէն եւս վկայութիւն կը բերէ հեղինակը , թէ Հայոց մէջ կայ մնացած արւձաքսնք Տապանին՝ Մասիս լեռան վրայ իջած ըլլալուն :

Բայց բաւական խիզախ պէտք է թուի այս կնիթագրութիւն, երբ նկատի առնենք թէ արդի Հայերը, եւ մասնաւանդ Երասխի հովտին Հայերը, Մարաց հետ եկող Արիական ցեղերու հոսանքին կրկերաբերին, եւ իրենց հին աւանդութեանց զրոյցներու, երգերու, հեթանոսական կրօնի, տեղի յորջորջումներու ամենամեծ մասը Մարական է: Այսպէս Մասիս լեռան վրայ Ակոռի գիւղին անունը ինչպէս նաեւ հրաշալուր Անահտական աղբիւրին անունը՝ ուղղակի կրհամեմատին էլ բուրգ լեռնաչլթային լեռնագագաթներէն մէկուն Հայտի (= Ակոռի) ու անկէ բխող ամենայն ջուրը նախաղբիւր Արդի - Մարս Անահիտի հետ:

Հետեւաբար երբ կրփնտուռի աւանդութիւն մը վերաբերեալ այնպիսի վաղնջական ժամանակի, որպիսին է Տապալի իջման ժամանակը, դժուար է ապաւինիլ հայ աւանդութիւններու, որոնց ամենէն հիները զուգընթաց են Մարաց աւանդութեանց, որոնց մէջ եւ կամ Աւեստայի մէջ գտնէ պէտք էր գտնուէր արձագանդ Մասիս այդ բարձր հանգամանքին, մասնաւանդ թէ Մասիս լեռը բնաւ չէր կրնար անձանօթ մնալ Մարաց, իրենց մօտիկ դրացիութեան պատճառաւ:

Մեր այս տարածայն կարծիքը յայտնելէ յետոյ, պէտք է ընդունինք թէ ամենամեծ գովեստի արժանի է այն խղճամիտ եղանակը որով ընթերցողին բացատրուած են թեր ու դէմ վկայութիւններով՝ շատ խրթին խնդիրներ Հայ ցեղի ծագումն, Ուրարդու անունի բուն սկիզբին եւ նշանակութեան, Ս. Գրոց Հայ թարգմանութեան, եւ Հայ մատենագիրներու վրայ որոնք այս խնդրոց հետ վերաբերութիւն ունին: Խիստ հանճարեղ է նաեւ հեղինակին պաշտպանութիւնը Բուզանդի բնագրին ընդդէմ Գէլցըրի կարծեաց՝ թէ խիա առ խիա եւ քով քովի յաճախութիւնը հոմանիշներու եւ զուգադիր պարբերութեանց պարզապէս օրինակողներու սխալն է, որով լուսանցքներէն մտցուած է բնագրին մէջ: Հեղինակը իրաւամբ դիտել կուտայ թէ այդ ամէնը Բուզանդի հարազատ գրածն է, եւ օրինակներով կը հաստատէ: Արդարեւ այդ յորդաբանութիւնը յատուկ է մանուկ մատենագրութեան մը առոյգ, եռանդոտ, խօլ կեանքի շրջանին՝ որպիսին եղած է Բուզանդի շրջանը, եւ մասնաւորապէս կը յարմարի այն Բուզանդի գրութեան, որուն նկարագիրը աւելի վիպասանական է քան բուն պատմական:

Կը վերջացնենք այս սողերը ջերմապէս յանձնարարելով սոյն գիրքը, որ եթէ ամեն խնդրի մէջ չի հարկադրեր ընդունել հեղինակին համոզումը, գէթ խորհել կուտայ յամենայն դէպս: Յուսանք որ շուտով լոյս կը տեսնէ Հայերէն թարգմանութիւնը՝ միայն Հայերէն գիտցող ընթերցողներու համար, որոնք յիրաւի պէտք է շատ կարօտը զգացած ըլլան այսպիսի գրքի մը, որ քննական ստոյգ լոյսի տակ կը ներկայացնէ այնքան կարեւոր եւ հետաքրքրական հարցեր Հայ ազգի եւ հնախօսութեան:

Գ. ՅՆՏՔԼԵԱՆ .

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԶՄԻՒՌՆԻԱՅԷՆ

Արժ. Տ. Հայր

Փետրվար ամսոյ «Հայ - Եկեղեցի» կրօնաթերթի 54 էջի հետեւեալ սողերը թէ «Քրիստոս, իր թլփատութեան արիւնին առաջին կաթիլները ուխտ և գրաւական ներկայացուց չոր Աստուծոյ ի նշան հաշտութեան, եւ թէ իր մանկական արեան առաջին և սուրբ կաթիլները կը թափէ ի լրումն Հին Ուխտին և այլն .» բանասէր անձանց կողմէ խնդրոյ նիւթ ըլլալով, կրօնի և Աւետարանի հոգւոյն հակառակ գտնել կը թուին. յայտարարելով թէ՛ ի՛նչպէս, կարելի՞ է... աւելի յարմար և ճիշտ չէ՞ ըսել. «Քրիստոսի Տեսոն մերոյ Այսպիսի վրայ թափած արիւնն էր որ հաշտեցոյց տառապեալ մարդկութիւնը ընդ չոր Աստուծոյ, և ո՛չ թէ թլփատութեան առթիւ թափուած արիւնը»: — Մի գուցէ Արժ. Խմբագիրը, վերոյիշեալ սողերու հեղինակին եպիսկոպոսութեան ի պատիւ զանցառած ըլլայ կարեւոր կէտերը յայտաւել: Այս առթիւ արժանայարգ խմբագրին ուշադրութիւնը կը հրաւուրուի:

ՄԻՂՐԱՆ ՄԷԼԻՔԵԱՆ .

Իրաւ է Քրիստոսի մահն ի վերայ խաչին գերազանցօրէն հաշտութեան միջոցն եղաւ ի մէջ Աստուծոյ և մարդկան, սակայն նոյնքան Աւետարանի ոգւոյն հակառակ է Քրիստոսի մահն նորա մնացեալ երկրաւոր տնօրէնութիւններէն բաժանել՝ որքան պիտի հակառակ լինէր ի թէ Ղևոնդ Սրբազանի միտքը լինէր՝ բաժանել և անջատել թլփատութիւնն և այդ առթիւ թափած արիւնն՝ Քրիստոսի մնացեալ տնօրէնութիւններէն: Մի այսպիսի անջատում չենք տեսներ Սրբազանի

յօղուածին մէջ : Քրիստոսի ամբողջ կեանքն ի Ծննդեանէ մինչև Համբառնանքի մէկ անընդհատ զոհարարութիւն և պատարագ էր, որով զմեզ գնեց ի գերութեանէ սատանայի : Փրկագործութեան ամենէն ահեղ խորհուրդն է (Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ), և ինչպէս մարդեղութեան ամբողջ տնօրէնութիւն մեր փրկութեան պատճառ կը համարուի, ըստ ամենայնի համաձայն է Ս. Գրոց ոգւոյն և նախկին հայրապետաց մեկնութեանց՝ նաև մարդեղութեան իւրաքանչիւր պարագայ (ինչպէս ծնունդն, թշփատութիւնն, մկրտութիւնն, փորձութիւնն և այլն .) իբրև մարդկային ազգի փրկութեան և ընդ Աստուծոյ հաշտութեան միջոց և պատճառ համարել : Ծան . եսմբ :

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԷՆ

Քրիստոս Թարեալ ի Մեռելոց

Արժանապատիւ Պատուական և սիրելի Տէր Հայր ,  
 Ենորհաւորուեմք մեր Փրկչի Սուրբ Յարութիւնը ցանկալով Ձեզ՝ շատ եւ շատ տարիներ հասնել այս ուրախ մեծ օրին ողջ եւ առողջ ի բարին ամէն : — Անցած 30 Յունվարի նամակովս յայտնած էի Ձեզ, Բարեկրօն Տէ՛ր , իմ փափաքս ստանալ Հայ - Եկեղեցի ամսաթերթը : Երկու ամիս Յին մեծ ուրախութեամբ ստացայ Ձեր բաց նամակը եւ ամսաթերթիդ 1900թ. 1 - 10 թիւերը և յետոյ այս 1901թ. թվ. և ժվ. թիւերը :

Իմ թոյլ գրչովս ես չեմ կարող Ձեզ արտայայտել իմ սրտիս ուրախութեան և միութարութեան զգացմունքը, որ ունեցայ Ձեր պատուական հոգեշունչ կրօնական թերթի կարգալով : Մենք տառապեալ զաւակներս բազմաշարժար Հայոց ազգային առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծ պէտք եւ կարիք ունէինք այսպիսի օգտակար աստուածաբանական և կրօնական թերթի . այժմ փա՛ռք Ամենակարողին, Ձեր շնորհիւ, հոգեգոծ Տէր , այդ պակասը անկասկած լրացուեց : Անկեղծօրէն կ'ստեմ, որ մեր վեհափառ Հայրիկի Աստուածընտիր Հայրապետի գրութիւններէց յետոյ, ինձ չի պատահեր ոչ մի դիրք եւ թերթ որ այսպիսի սրտի եւ հոգւոյ հրճուանքով կարգացած լինէի : Տացէ Ամենաբարին Աստուած , որ մեր թշուառ ազգի մէջ ծագի և տարածուի ինքնաճանաչութեան հոգին , հեռանայ մեզնից անտարբերութիւնը և ոչնչանայ այն ազգաքանդիչ և աւերիչ ուղղութիւնը որ երեւումէ մեր պոռոտախօս նոր ինտելիգենտների մէջ վերաբերեալ մեր Մայր Եկեղեցւոյ . . . . . : Եթէ եւրոպական ամբապէս քաղաքականապէս կազմակերպուած տերութիւններում գոյութիւն ունին բազմաթիւ աստուածաբանական ու զանազան կրօնական թերթեր , ապա ուրեմն որքա՞ն անհրաժեշտ է այսպիսի թերթի գոյութիւնը մեր մէջ , որ վայրագատին ամենուրեք սփռուած ազգ զոլով , մեզ համար միշտ եղած է, և պիտի լինի , հաստատուն խորիսի փրկու-

Թեան և յուսոյ՝ մեր համբերատար ազատահոգի դժառատ Մայր Եկեղեցին: Բանի՝ երկար դարերի պատմական ամենատխուր և ազգակործան բիւրուոր փաստերը պիտի պարզապէս համոզեն ամեն ինքնաճանաչ պատուական Հայ մարդուն, որ մեզ համար արգէն անհերքելի ճշմարտութիւն է՝ թէ « արտաքոյ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ չիք փրկութիւն »:

Ձեր ներողամտութիւնը խնդրելով կարճատուժեմ նամակս, որովհետեւ իմ գիտցած բառերս պակասուժեն իմ սրտի խորքերի զգացմունքները Ձեզ լիովին յայտնելու: Որքա՛ն և որչա՛փ ցանկալի է որ այսպիսի աստուածաբանական, կրօնական բարոյական թերթեր հրատարակուէին գոնէ Կ.Պօլիս և Խիֆլիս ևս:


Պատուական հայր իմ, Ձեր այս ամսաթերթը համարուէք նոր շրջան, ուրեմն կոյ Ձեզանում, և հին՝ շրջան. ես խոնարհաբար Ձեզնից խնդրում եմ բարեհաճէք ինձ անյապաղ ուղարկել և հին շրջանը և բոլոր Ձեր աշխատութիւնները և նորանց արժողութիւնը ինձ յայտնել: Իսկ Հայ-Եկեղեցի կրօնաթերթը խնդրուժեմ ուղարկել ինձ այսուհետեւ երկու օրինակ սկսած 1900 թուականից, որոնց արժողութիւնը համաձայն Ձեր գրութեան 1900 և 1901 թուականների համար տասը (10) ռուբլի յղումեմ առ Ձեզ:

Մնումէ ինձ մաղթել առ Ամենագթած Տէրն մեր, որ նա տայ Ձեզ կարողութիւն, զօրութիւն և շատ երկար օրեր՝ շարունակելու Ձեր հիանալի արգաստուած կրօնական և աստուածաբանական ամսաթերթը, որ ամեն դժուարութիւն կրելով այն հեռաւոր աշխարհից, որպէս հարազատ արթուն հոգևոր հովիւ քարոզուէք մեր լոյս հուսան և ուսուցանուէք մեզ:

Ես, որպէս անձնանուէր ծառայ մեր սիրելի Ազգի և Ս. Եկեղեցւոյ, թոյլ իմ տալիս ինձ իմ խորին շնորհակալութիւնս Ձեզ յայտնելու, ցանկալով կատարեալ յաջողութիւն Ձեր արդիւնաւոր գործունէութեան մէջ, որդիական սիրով համբուրումեմ Ձեր աջը և քնումեմ պատրաստակամ Ձեր ծառայ,

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊՈՂՈՍԵԱՆ ՍԵՐԲՐԱԿԵԱՆՑ

Աստուխան, 26 Մարտի 1901թ.



## ԵՐԿՈՒ ՈՍՈՒՆԵՐ

(Շար . Տես էջ 123 , )

Հոգին Յանդիմանիչ

Դիտեմ . ահա՛ զիս կը ծաղրես .  
 Եւ անխելք ալ՝ կը համարես .  
 Ո՛վ գարշելի՛ եւ լիբրերես .  
 Յանգրգնութեանդ՝ վերջ՝ չը բերն՝ս :

Ա. յնքան իմ գէմ՝ յանգրգնեցար .  
 Որ խրրատո՞ղ՝ ալ ինձ դարձար .  
 Դիւայ պատրանք՝ դեռ չիմացար .  
 Որ մեղք ու վարձք՝ շուտ ուրացար :

Ես քեզ նրման՝ մրտաթափ չեմ .  
 Դիւին թակարդ՝ կը ճանաչեմ .  
 Աւազելով՝ կը հառաչեմ .  
 Դիւապատիր՝ քեզ կը կոչեմ :

Մարմին կամակոր

Դուերն ի՞նչ են՝ ես չը գիտցայ .  
 Կան՝ թէ չըկան՝ դեռ չիմացայ .  
 Միայն քեղնէ՛ ես հասկացայ .  
 Որ կը պընդես՝ թէ չար դեւ կայ :

Քեզ ի՞նչ վընաս՝ տըւած եմ ես .  
 Որ անխընայ՝ զիս կ'անարգես .  
 Անասունի՛ տեղ կը դընես .  
 Լիբը ու յանդուգն՝ ալ կանուանես :

Դուն ես ահա՛ իմին ներհակ .  
 Չարահամբաւ՝ ու հակառակ .  
 Չիս բրած ես՝ միշտ խայտառակ .  
 Մինչ ես չունիմ՝ վարք անառակ :

Հոգին երեսիչ

Քեզ ցուցընեմ՝ որ սատանայ .  
 Աշխարհքիս մէջ՝ միշտ կը կենայ .  
 Որ քեզ ալ շատ՝ կը մտունայ .  
 Իմ գէմ՝ բղքեզ՝ զէնք կուենայ :

Քու մոլի վարք՝ ես լաւ դիտեմ .  
 Ամէն գաղտնիքդ՝ ալ կը դիտեմ .  
 Սաստիւ բղքեզ՝ թէ խրրատեմ .  
 Չեմ սըխալիբ՝ ճըջմարիտ եմ :

Ուրեմն ի՞նչու՝ կը խըստանաս .  
 Ճշմարտութեան՝ գէմ կը կենաս .  
 Չար գործքերէդ՝ թէ յետ մընաս .  
 Մեղքիդ ներում՝ շուտ կը գըտնաս :

## Մարմին Խճճահաւան

Ես մեղք չունիմ՝ եւ չեմ յիմար .  
Քու խրրատներ՝ ինձ չեն յարմար .  
Իմ սիրած գործք՝ ինձի համար .  
Միշտ բարի են՝ եւ օգտակար :

Զիս մի՛ աններ՝ քու ոտից տակ .  
Ես չեմ լիներ՝ քեզ հրպատակ .  
Չեմ ընդունիր՝ ծեծ ու ապտակ .  
Լաւ ճանչըցա՞ր՝ իմ նըպատակ :

Խոնարհ ու հեզ՝ մարդն անըզգայ .  
Ինձի համար՝ ոչ ինչ կուզայ .  
Ուր համբերող՝ ու խոնարհ կայ .  
Մազր ու ծանակ՝ կըլլան նոքա :

## Հոգին Սասիչ

Չափըզ գիտցի՛ր , մարմին հըպարտ .  
Խօսելզ զու՛ր է՝ եւ տարապարտ .  
Ո՛վ գարչելի՛ մեղսամակարդ .  
Որ դարձած ես՝ գիւաց թակարդ :

Համբերութեան՝ համ չես առած .  
Զի սանձարձակ՝ ձի ես դարձած .  
Խոնարհ ու հեզ՝ ալ չես կեցած .  
Զի Աստուծա՛յ՝ ես հեռացած :

Համբերող մարդն՝ է ժիր մըշակ .  
Տիրոջ շնորհաց՝ լաւ ընդունակ .  
Մոլութեանց դէմ՝ զուռը միշտ փակ .  
Բարի գործոց՝ պըտղահաւաք :

## Մարմին Հեռասէր

Բան մը հարցնեմ՝ զանց մի ընէր .  
Եւ ինձի ալ՝ մեղ մի դընէր .  
Ի՞նչու համար՝ անասուններ .  
Յաճախ մերկ են . ու չեն խըպներ :

Ես ալ կուզեմ՝ անասնոց պէս .  
Չը պատկառել՝ ամօթանքէս .  
Ամօթն երբ որ՝ հանեմ մըտքէս .  
Չեմ արգելուիր՝ իմ հաճոյքէս :

Քանի որ ես՝ ալ մարմին եմ .  
Իրաւունքս՝ կը պաշտպանեմ .  
Պէտք է ամօթ՝ մէկ դի դընեմ .  
Որ համարձակ՝ ուզածս ընեմ :

## Հոգիւն Զգուօացնող

Անասուններ՝ չեն ամօթիւած .  
 Եւ կըյայտնեն՝ իրենց գործած .  
 Մեղք վարձք անոնց՝ չէ սահմանուած .  
 Զի չին ի կարգ՝ բանականաց :

Մարդոց վըրայ՝ ծածկոյթներ կան .  
 Որովհետեւ ամօթ կըզգան .  
 Ամօթ մեղքին՝ ամէն վայրկեան .  
 Մարդ կըզպահէ՝ առանց անկման :

Յիշէ՛ որ դուն՝ ես ազնիւ մարդ .  
 Խօսուն ձիրքովդ՝ յոյժ փառազարդ .  
 Պահէ՛ պատիւդ՝ միշտ անազարտ .  
 Պատուով կըլլաս՝ սուրբ անարատ :

## Մարմին Յանկատէր

Իմին պատիւս՝ ախորժակս է .  
 Որ իմ խորհուրդս՝ ինձի կասէ .  
 Կիրքս ալ արդէն՝ ինձ կըսպասէ .  
 Գործել այն գործ՝ որ ուզածս է :

Ինչպէս անա՝ անասուններ .  
 Ունին իրենց՝ բընազգումներ .  
 Միշտ կը գործեն՝ հեշտալիներ .  
 Երկիւղ չունին՝ եւ չեն խըպներ :

Ամօթ մարդուս՝ աղէկ բան չէ .  
 Կիրքով լըցուած՝ սիրտ կը տանջէ .  
 Ունայն խիղճն ալ՝ ա՛խ կը գոչէ .  
 Անարդ շան պէս՝ միշտ կը հաջէ :

## Հոգիւն Յանկիւմանիչ

Իրաւ , որ դուն՝ խենդացեր ես .  
 Եւ պատուազուրկ՝ իսկ դարձեր ես .  
 Մարդ ըլլալդ ալ՝ մոռացեր ես .  
 Սըրբութեան չափդ՝ անցուցեր ես :

Լըսէ՛ խօսքիս՝ մարմին յիմար .  
 Ախատուոր սէր՝ չէ մեզ համար .  
 Մէկ մը հայէ՛ երկնից կամար .  
 Որոյ փառքն է՝ մեզի յարմար :

Աստուած ըզմեզ՝ մարդ է ըրած .  
 Իրեն համար՝ որդեգըրած .  
 Զինք սիրելու՝ պարտք մեզ դըրած ,  
 Եւ հօր նըման՝ ըզմեզ սիրած :

## Մարմին հորամանկ

Ճըշմարտութեան՝ դուն ես վըկայ .  
 Զի բերնիդ մէջ՝ սուս խօսք չըկայ .  
 Տարակոյս մը՝ սըրտիս մէջ կայ .  
 Խընդրեմ մէկնէ՝ ինձ զանիկայ .

Լայն ճանբայօխ՝ ինչու՞ համար .  
 Շատ մարդ կերթան՝ մըշտայօժար .  
 Մեզ ալ լաւ չէ՞ հետեւարար .  
 Որ շատերուն՝ լինինք յարմար :

Իսկ նեղ ճանբան՝ գացող քիչ կան .  
 Որք շատ սնդամ՝ կըտըրտընջան .  
 Ամէն քայլին՝ մէկ ցաւ կըզգան .  
 Եւ յուսահատ՝ յետ կը դառնան :

## Հոգին հրասիչ

Եթէ խօսքիս՝ կը հաւատաս .  
 Պէտք է շուտով՝ ուղղութեան գաս .  
 Քեզի կուտամ՝ օգտակար գաս .  
 Բա՛ց ճականջներդ՝ չի խըլանաս :

Լայն եւ արձակ՝ ճանբու վըրայ .  
 Կորըստական՝ որողայթ կայ .  
 Ուր կըհըսկէ՝ միշտ սատանայ .  
 Շատ մարդ իրեն՝ որս կուենայ :

Եկու՛ր քալենք՝ նեղ ճանբայէն .  
 Ուրկէ գընաց՝ Յիսուս որ էն .  
 Մի վախենար՝ այն նեղ անցքէն .  
 Որ կը տանի՝ մեզ մինչեւ յէն :


## Մարմին ներեակ

Իրաւ դուն իմ՝ թըշնամին ես .  
 Որ կամքիս դէմ՝ խօսքեր կընես .  
 Նեղ ճանբան ինձ՝ կը ցուցընես .  
 Որ տանջելով՝ զիս մեռցընես :

Խօսքիդ մըտիկ՝ ես չեմ ըներ .  
 Կամքիդ բընաւ՝ չեմ հաւաներ .  
 Ես ընտրած եմ՝ լայն շաւիղներ .  
 Որք չեն ինձ փուշ , ալ ծաղիկներ :

Եկու՛ր մեզ լայն՝ ճանբայ բանանք .  
 Եւ երջանիկ՝ կեանք ըստանանք .  
 Մինչեւ մեռնինք՝ ու հող մըտնանք .  
 Այնուհետեւ՝ ո՛չ ինչ կըլլանք :

( Շարունակելի )



## Ա Ջ Դ

Կրօնաթերթիս անցեալ տարուայ թիւերն այլ  
եւա բաժանորդագրութեան պայմանաւ չեն ծախուեր.  
այլ Ա - Ժ թիւերն միասին կը վաճառուին անկազմ  
4 Շիլինի (5 Ֆրանքի), գեղեցիկ կանաչագոյն լա  
թակազմով՝ ոսկեզօծեալ վերնագրով՝ 5 Շիլինգ-  
(6 Ֆրանքի):

Յետայսու նոր բաժանորդագրութիւն կը նդունուի  
միայն ներկայ տարուոյ Յունուարէն կամ առաի  
չիկայ Յուլիսէն: